

վկայականը կու տայ եւ Կ. Պոլսեցի տիրացու Աթանաս Մէրասեան կամ Տայի-Սիմոնեանի հետ կը զըկէ զինք ի Սերաստիա, որպէս զի նոյնտեղ Դեւոցայ աւանին Ս. Գէորգ վանքին ծանօթ հայ կաթողիկէ Առաջնորդ Արէլ Արքեպս. էն քահանայ ձեռնադրուի ըստ հայ ծիսի:

Արէլ Արքեպ. տիրացու Յակովբոսը վերստին քննելէն ետեւ 1741 Յունիս 12 Պնտեկոստէի օրը կը ձեռնադրէ քահանայ, եւ այնուհետեւ կու տայ մասնաւոր եւ ծայրագոյն վարդապետութեան աստիճանները, եւ ասոնց համար ալ վկայագիրներ կու տայ: Մեսրոպ Վ. եւ ընկերը փոխանակ Կ. Պոլիս վերագառնալու, ինքնագլուխ կ'որոշեն երթալ Սոյ Կաթողիկոսին, յուսալով Եպիսկոպոս ձեռնադրուիլ: Անշուշտ կրնանք ենթադրել որ ասոնք 30 տարեկան եղած պիտի ըլլան:

Յակովբոս-Մեսրոպայ Եպիսկոպոս ձեռնադրուած ըլլալուն վկայագրին համեմատ, որ նոյնպէս Անտոնեանց Դիւանն ի Կ. Պոլիս կը պահուի, զինք ձեռնադրած է 1742 Օգոստ. 15 ին «Յովհաննէս Կաթողիկոս ամենայն Հայոց եւ Պատրիարք տանն Կիլիկիոյ... եւ սպասաւոր մեծ եւ սքանչելաշնորհ Սուրբ Աջոյն Լուսաւորչի... Ահաւոր անուամբ ամենասուրբ Երրորդութեան եւ նշանաւոր Սուրբ Խաչիւս, եւ հզօր Աջով Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, եւ Սրբոյն Յակոբայ Մծբնայ սքանչելագործ Հայրապետին եւ այլոց Սրբոցն որք կան ի սուրբ Աթոռս ի պահպանութիւն ամենայն հաւատացեալ քրիստոնէից»: